

## Կոտորակների համեմատումը

- Նույն հայտարարով երկու կոտորակներից ավելի մեծ է այն կոտորակը, որի համարիչն ավելի մեծ է:

Օրինակ՝  $\frac{2}{4} > \frac{1}{4}$  :

- Նույն համարիչով երկու կոտորակներից ավելի մեծ է այն կոտորակը, որի հայտարարը ավելի փոքր է:

Օրինակ՝  $\frac{1}{2} > \frac{1}{4}$  :

- Եթե կոտորակի համարիչն ու հայտարարը իրար հավասար են, ապա կոտորակը հավասար է 1-ի:

Օրինակ՝  $\frac{4}{4} = 1$

- Եթե կոտորակի համարիչը մեծ է հայտարարից, ապա կոտորակը մեծ է 1-ից:

Օրինակ՝  $\frac{6}{4} > 1$ , քանի որ  $6 > 4$ :

- Եթե կոտորակի համարիչը փոքր է հայտարարից, ապա կոտորակը փոքր է 1-ից:

$\frac{4}{6} < 1$ , քանի որ  $4 < 6$ :

Մի կոտորակը մեծ է մյուսից, եթե առաջին կոտորակի համարիչի և երկրորդ կոտորակի հայտարարի արտադրյալը մեծ է առաջին կոտորակի հայտարարի և երկրորդ կոտորակի համարիչի արտադրյալից:

Օրինակ՝

$$\frac{4}{6} > \frac{3}{4}$$

$$4 \cdot 4 \text{ և } 6 \cdot 3$$

$$16 < 18, \text{ ուստի}$$

$$\frac{4}{6} < \frac{3}{4} :$$

### Առաջադրանքներ

Համեմատեք կոտորակները

- $\frac{10}{4}$  և  $\frac{5}{4}$
- $\frac{32}{4}$  և  $\frac{32}{14}$
- $\frac{11}{4}$  և  $\frac{4}{11}$
- $\frac{6}{100}$  և  $\frac{101}{100}$
- $\frac{3}{7}$  և  $\frac{3}{9}$

Համեմատեք կոտորակները

- $\frac{9}{11}$  և  $\frac{16}{20}$
- $\frac{7}{8}$  և  $\frac{9}{15}$
- $\frac{5}{11}$  և  $\frac{25}{26}$
- $\frac{14}{16}$  և  $\frac{2}{7}$
- $\frac{12}{25}$  և  $\frac{26}{32}$

Կոտորակները դասավորեք աճման կարգով

- $\frac{3}{9}, \frac{11}{9}, \frac{5}{9}, \frac{101}{9}, \frac{98}{9}, 1$
- $\frac{16}{25}, \frac{16}{205}, 1, \frac{16}{1001}, \frac{16}{18}, \frac{16}{24}$
- $\frac{16}{5}, \frac{5}{2}, 1, \frac{10}{4}, \frac{18}{5}, \frac{16}{8}$

Կոտորակները դասավորեք նվազման կարգով

- $\frac{3}{9}, \frac{11}{9}, \frac{5}{9}, \frac{101}{9}, \frac{98}{9}, 1$
- $\frac{16}{25}, \frac{16}{205}, 1, \frac{16}{1001}, \frac{16}{18}, \frac{16}{24}$
- $\frac{16}{5}, \frac{5}{2}, 1, \frac{10}{4}, \frac{18}{5}, \frac{16}{8}$